ՄԱՏԹԵՈՍ ՄԱՄՈՒՐՅԱՆԻ ԱՆՀԱՅՏ ԾԱԾԿԱՆՈՒՆԸ

Մ. Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արևմտահայ գրող, ականավոր հրապարակախոս խմբագիր, թարգմանիչ ու մանկավարժ Մատթեոս Մամուրյանը, Վրույր և հետագայում՝ Շահնուր հանրահայտ ծածկանուններից բացի, հրապարակախոսական գործունեության սկզբնական շրջանում հանդես է եկել նաև Աշոտ ծածկանունով։ Այս ծածկանունն առաջին անգամ հանդիպում է Զմյուռնիայում 1860 թ. հրատարակված «Միություն» դեմոկրատական հանդեսի հուլիսի 15-ի համարում։ Արձագանքելով հանդեսի 5-րդ համարում տպագրված Ղ. Մամուրյանի «Աղջկանց դաստիարակության վրա դիտողություն մը» հոդվածին, Աշոտը հույս է հայտնում, որ նրա հեղինակը կշարունակի իր դատողություններն իգական սեռի դաստիարակության շուրջը՝ կանանց դաստիարակության խնդիրը համարելով «մեր ազգային հառաջադիմության աղբյուրը»։ Արտակարգ սրությամբ է օժտված Աշոտի նամակը։ Նա գտնում է, որ աղջիկների դաստիարակությանը լուրջ նշանակություն չտալու պատճառով ընթանում ենք դեպի մի «անել բավիղ և կորստյան կդիմենք»։ Բայց և զգուշացնում է, որ աղջիկները, օտար քաղաքներում կրթություն ստանալով, օտարանում են ազգից, նույնիսկ իրենց նախնիներից, դառնում են աշխարհաքաղաքացուհիներ։ Դրա պատճառն այն է, որ «կօրինակենք վատորեն եվրոպականին արտաքին զարդն, պաճուճանքը, ցույցն ու շպարը»։ Ազգային դիմագիծը կորցնողներին համարելով «մարդանման կապիկ», Աշոտը գտնում է, որ իգական սեռի դաստիարակության խնդիրը պետք է լինի՝ աճեցնել այնպիսի աղջիկներ, որոնք «հայրենասեր մայրեր լինին և իրենց զավակաց մայրական կաթով հայրենասիրական ոգին ջամբեն»։ Հայ աղջիկների պարծանքը պետք է դառնա ազգի բարոյական աճին ու դաստիարակությանը նպաստելը։ Հեղինակի հիմնադրույթն է՝ «Ամբողջ ազգ մի կրնա կենդանանալ և կանգնիլ կանանց ձեռքով... տանտիկին՝ մեր ընտանյաց և հայրենյաց զարդն ու մխիթարությունն է ու պահապան հրեշտակուհին է», նրա միջոցով սերնդից սերունդ է փոխանցվում «առաքինության անմոռաց հիշատակը, որ...կենդանի հրահանգիչ մ'է»[1]։ Ազգային հատկանիշները կորցնող օրիորդն, ի վերջո, դառնում է «փետած հավ»։

Նամակի հեղինակն, այդպիսով, վեր էր հանում ու դատապարտում մի անողոք ճշմարտություն՝ օտարամոլությունը, որ տարածում էր գտել Զմյուռնիայի և Կ. Պոլսի հայության, մասնավորապես իգական սեռի շրջանում։ Գերադասելով հանդես գալ ծածկանունով, Մամուրյանը միաժամանակ քողարկում էր այն փափուկ հանգամանքը, որ արձագանքում էր իր եղբոր՝ Ղուկաս Մամուրյանի հոդվածին։ Սակայն վերջինս, «Միության» մեջ հրատարակելով նամակը, նախաբանում նշել է, որ նրա հեղինակն իր բարեկամն է։ Այդ հիշատակությունն արդեն ենթադրել է տալիս, որ նամակի հեղինակը հավանաբար Մ. Մամուրյանն է։ Այդ ժամանակ նա Կ. Պոլսում վարում էր պատրիարքարանի դիվանապետի պաշտոնը, միաժամանակ աշխատակցում էր մամուլին, մասնավորապես «Միության» էջերում շարունակաբար հրատարակում էր «Անգղիական նամականին»։

Շատ չանցած Աշոտը հանդես է գալիս խափանված «Միություն» հանդեսի շարունակությունը կազմող և հավելյալ անունով լույս տեսնող «Միություն սահմանադրականի» էջերում։ Այս հանդեսի հենց առաջին՝ 1861 թ. սեպտեմբերի 1-ի համարից սկսած տպագրվում է «Սահմանադրություն» ընդհանուր

---

[1] «Միություն». 1860, N 8, էջ 108—109։

վերնագրով անստորագիր հոդվածը, որի շարունակությունը լույս է տեսնում 6-րդ, 8-րդ, 9-րդ 13-րդ համարներում, հավանաբար նաև հետագայում, որ հնարավոր չէ ճշտել հանդեսի հավաքածուի լուսատիպը թերի լինելու պատճառով։ Անստորագիր հրատարակվելով հանդերձ, հոդվածաշարքի չորրորդ հատվածը, սակայն, կրում է Աշոտի ստորագրությունը, որը կարծես թե գրվել է վրրիպմամբ։ Դա էլ օգնում է ճշտելու, որ արևմտահայ Ազգային սահմանադրության էությունը քննող և «շարունակելի» նշումով լույս տեսնող հոդվածաշարքի հեղինակը միևնույն անձնավորությունն է, որ հանդես է գալիս հիշյալ ծածկանունով։ Հոդվածաշարքն ընդհատումներով հրատարակելը նույնպես հուշում է, որ նրա հեղինակը զմյուռնաբնակ չէ, որ այն գրվել է հատված առ հատված։ Դա ակնառու է դառնում նաև խմբագրության երկու ծանոթագրությունից, որոնք հաղորդում են հոդվածաշարքի տպագրությունը «ակամա» և «քանի մը պատճառով» ուշանալու մասին[2]։

Միամյա տարեշրջանը բոլորելուց հետո «Միություն սահմանադրականը» 1862 թ. օգոստոսին դադարեց հրատարակվել։ Բայց Աշոտ ծածկանունը երևաց դարձյալ Զմյուռնիայում լույս տեսնող «Ծաղիկ» դեմոկրատական հանդեսում։ Այս անգամ նա արդեն նշում է, որ գրում է Կ. Պոլսից, թեման կրկին Ազգային սահմանադրությունն է և նրա շուրջը տեղի ունեցող հասարակական եռուզեռը։ «Ծաղիկի» 1862 թ. օգոստոսի 1-ի համարից հետո նա հանդես է գալիս ևս չորս անգամ՝ օգոստոսի 15-ին, 20-ին, սեպտեմբերի 10-ին և 20-ին՝ միևնույն թեմայով և միևնույն վերնագիրը կրող հոդվածաշարքով՝ «Սահմանադրություն»[3]։

Համադրելով այս հոդվածաշարքը «Միություն սահմանադրականում» նույն խնդիրներին նվիրված հոդվածաշարքի հետ, ակնառու է դառնում, որ դրանք պատկանում են միևնույն հեղինակին. դրանց ելակետը, սկզբունքները, առաջադրած ուղեգիծը, լեզուն ու ոճը, երբեմն էլ արտահայտությունները նույնն են։ Ավելին, տարբեր հանդեսներում հնգամսյա ընդմիջումով լույս տեսած այդ հոդվածաշարքերը լրացնում են միմյանց, «Ծաղիկի» հոդվածագիր Աշոտը շարունակում է «Միություն սահմանադրականի» նույնանուն հեղինակին, զարգացնում նրա գաղափարները։ «Ծաղիկում», սակայն, հեղինակը ստորագրում է հոդվածաշարքի յուրաքանչյուր հատվածը՝ Աշոտ։

Աշոտը հանդես էր գալիս նաև Կ. Պոլսում հրատարակվող հայ պարբերականների էջերում։ Հենց 1862 թ. սեպտեմբերին, օրինակ, նա «Կիլիկիա» հանդեսում նույն այդ ծածկանունով տպագրել է «Սահմանադրություն» հոդվածը[4], որը և անմիջապես արտատպել է «Ծաղիկը», իսկ նրանից հետո նաև «Գարուն Հայաստանի» հանդեսը՝ հենց միևնույն տպարանում տպագրվող «Ծաղիկի» շարվածքից»[5]։ Այդպիսով, այդ երեք հանդեսները համերաշխվում էին Աշոտի այն մեկնության հետ, որ տրվում էր Կ. Պոլսում 1862 թ. օգոստոսի առաջին օրերին տեղի ունեցած ժողովրդական ցույցին՝ ի պաշտպանություն Ազգային սահմանադրության և ընդդեմ պատրիարքարանի ու ազգային գործիչների այդ խնդրում դրսևորած դիրքի, բացահայտում էին այդ առթիվ տեղի ունեցած լայնածավալ հուզումներն ու նրա հնարավոր հետևանքները։

Սակայն որքան էլ նույնանում են Աշոտ ծածկանունով տարբեր հանդեսներում տպագրված նյութերի բնույթը և Մ. Մամուրյանի ստորագրությամբ հրատարակված հոդվածների ընդհանուր դիմագիծը, այսուհանդերձ, դրանք դեռևս լիարժեք կռվան չեն Աշոտը Մ. Մամուրյանի ծածկանունը համարելու համար։ Այդպիսի անհրաժեշտ կռվան, մի քանի տարի հետո՝ 1867-ին, արդեն շատ որոշակի և ուղղակի տալիս է հենց Մամուրյանը։

---

2 «Միություն սահմանադրական». 1861, № 6, էջ 41. 1862, № 13, էջ 97։

3 «Ծաղիկ». 1862, № 40, էջ 329—332, № 41, էջ 337—339, № 42, էջ 345—347, № 44, էջ 361—365, № 45, էջ 369—372։

4 «Կիլիկիա». 1862, № 9, էջ 97—103։

5 Տե՛ս «Ծաղիկ». 1862, № 44, էջ 361—365 և «Գարուն Հայաստանի». 1862, № 14, էջ 105—109։

1864 թ. վերջերից Մ. Մամուրյանը առավել ակտիվորեն է աշխատակցում Գր. Չիլինկիրյանի «Ծաղիկին»՝ վայելելով խմբագրի կատարյալ վստահությունը և սկզբունքային զինակցությունը։ «Ծաղիկում» նա սկսում է հրատարակել «Հայկական նամականին», որը շարունակում է լույս տեսնել մինչև հանդեսի դադարելը։ Դրանից, ինչպես և այլևայլ հարցերի նվիրված հոդվածներից բացի Մամուրյանը «Ծաղիկի» էջերում Մ. Մ. ստորագրությամբ հրատարակում է «Ազգային սահմանադրություն» վերնագրով նոր հոդվածաշարքը[6]։ (Ի դեպ, ենթադրում ենք, որ նա այդ՝ Մ. Մ. և Վրույր ծածկանուններից բացի «Ծաղիկում» հանդես էր գալիս նաև Մ., Վ., Մ. Հրանտ, թերևս նաև այլ ծածկանուններով)։ Եվ ահա այդ հոդվածաշարքի երրորդ հատվածում քննելով Ազգային սահմանադրության անհրաժեշտության և օրինականության խնդիրը, Մ. Մ. Մամուրյանը գրում է. «Արդեն ասկից հինգ տարի առաջ Սահմանադրական Միություն հանդիսին մեջ Սահմանադրության վրա գրելու առթիվ ըսած էինք թե...» և ապա քաղում մի հատված։ Ծանոթագրությամբ նա ընթերցողին հղում է՝ «Միություն սահմանադրական, 1862, թիվ 9»[7]։

Հայրենական գրապահոցներում «Միություն սահմանադրականի» հավաքածուն չլինելու պատճառով մինչև հիմա հնարավոր չէր պարզել, թե նրանում տպագրված ինչ հոդված նկատի ուներ Մամուրյանը։ Այժմ, երբ մեր ձեռքի տակ կա այդ հանդեսի 18 համարների լուսատիպը, պարզվում է, որ խոսքը «Միություն սահմանադրականի» 9-րդ համարում (էջ 65—68) տպագրված «Սահմանադրություն» հոդվածաշարքի չորրորդ հատվածի մասին է, որը և ստորագրված է Աշոտ։ Համադրումը պարզում է, որ «Ծաղիկում» Մամուրյանը սրոշ սրբագրումով երկու հատված է քաղել «Միություն սահմանադրականի» նշված համարի էջ 66-ից։ Ահա այդ մեջբերումների և հինդ տարի առաջ լույս տեսած հոդվածի համապատասխան սկզբնամասերը.

«Սահմանադրությունը ի վաղուց անտի ազգային թե՛ կրոնական և թե՛ քաղաքական իրավանց վրա հիմնյալ և...» և այլն։ Ապա՝ «Սահմանադրությունը օրինակեց, ամփոփեց և մարմնացուց այն ընտանի և...» և այլն։ («Ծաղիկ». 1867, № 140, էջ 619)	«...Սահմանադրական կանոնը։—Ի վաղուց անտի ազգային թե՛ կրոնական և թե՛ քաղաքական իրավանց վրա հիմնյալ, և...» և այլն։ Ապա՝ «Սահմանադրությունը օրինակեց, ամփոփեց և մարմնացուց այն ընտանի և...» և այլն։ («Միություն սահմանադրական». 1862, № 9, էջ 66)

Այսպիսով, իր՝ Մ. Մամուրյանի հաստատուն վկայությամբ պարզվում է, որ Աշոտ ծածկանունով նա հանդես էր գալիս «Միություն սահմանադրականի» էջերում, որ Աշոտը նրա ծածկանունն է։ Ըստ որում, «Ծաղիկում» տպագրված հոդվածաշարքով նա շարունակում էր իր մտորումները, որոնք տարիներ առաջ ընթերցողին էր ներկայացրել «Միություն սահմանադրականի» էջերում՝ դարձյալ սահմանադրության շուրջը։ Ծածկանվան այս բացահայտումը հնարավորություն է տալիս անվանի հրապարակախոս խմբագիր Մ. Մամուրյանի վաղ շրջանի գործունեությունը և մտահայեցությունը քննել ավելի մեծ թվով և իրենց բովանդակությամբ առավել հարուստ նյութերի հիման վրա։ Դրանով երիտասարդ հրապարակախոսի գործունեությունը, որ, ի դեպ, կարոտ է ուսումնասիրության, հայտնի չափով լայնանում է, ամրապնդվում շահեկան գործոններով՝ նրա գաղափարական աճը և հայացքների զարգացումը երևան հանելու համար։

Այժմ ընդհանուր գաղափար տանք Աշոտ-Մամուրյանի նախ «Միություն սահմանադրականում», ապա «Ծաղիկում» միևնույն խնդրի շուրջը և միևնույն խորագրով («Սահմանադրություն») հրատարակած երկու հոդվածաշարքի մասին։ Ժամանակի առումով այդ երկու հոդվածաշարքը չեն համընկնում և

6 «Ծաղիկ». 1867, № 135—137, 140—141։

7 Նույն տեղում. 1867, № 140, էջ 619։

միմյանցից բաժանված են հնգամսյա ժամանակահատվածով։ Բայց ըստ էության ունեն օրգանական ընդհանրություն և միևնույն նպատակն են հետապնդում՝ հիմնավորելով Ազգային սահմանադրության կենսական անհրաժեշտությունը արևմտահայերի համար և նպատակասլացություն հաղորդել սահմանադրական պայքարին։

Երկարատև պայքարից հետո 1860 թ. մայիսի 24-ին Ազգային ժողովի հաստատությանն արժանացած սահմանադրության շուրջը, ինչպես հայտնի է, նոր և բուռն պայքար ծավալվեց։ Օգտվելով դրանից, սուլթանական կառավարությունը նախ արգելեց սահմանադրությունը, ապա խիստ վերաքննություններից ու անդամահատումից հետո, վերջապես 1863 թ. մարտի 17-ին վավերացրեց և այն պաշտոնապես սկսեց կիրառվել։ Մամուրյանի հոդվածաշարքերը նվիրված են հենց այդ պայքարին՝ նրա առավել լարված ժամանակամիջոցին՝ 1861 թ. սեպտեմբերից 1862 թ. սեպտեմբերը։ Աշոտ-Մամուրյանը ակտիվ ու բացահայտ դրույց է վարում ենթադրվող բարեկամի հետ, նրա, որ հերքում է սահմանադրության դերն ու նշանակությունը և իր սուր ու դիպուկ նկատողություններում մնկտեղում է սահմանադրության նկատմամբ թերահավատների գրեթե բոլոր փաստարկները։ Մի շարք առումներով մերժելով սահմանադրությունը, հակադրվող ընդդիմախոսը եզրակացնում է. «Ասի այնպիսի ճոխ ու պերճ կահ մ'է, որ գավառի հույլուն աղքատիկ տնակին մեջ ոչ տեղ ունի և ոչ արկավորություն։ Ուրեմն սահմանադրությունը մեոյալ օրենք մ'է և միայն յանի շինողներուն մտաց մեջ կենդանություն ունի»[8]։

Հերքելով հոռետես բանավիճողի փաստարկները և այդ ձևով ընթերցող հասարակությանը և ժողովրդական խավերին պարզաբանելով սահմանադրության իմաստը, Աշոտ-Մամուրյանը յուրաքանչյուր հայի ներարկում է այն գաղափարը, որ եթե նա կա, ապա գոյություն ունի նաև Հայաստանը։ Այդ ելակետից էլ հրապարակախոսը հիմնավորում է հայրենասիրության և հայի քաղաքացիության կենսական անհրաժեշտությունը՝ իբրև ժողովրդի ազատության և գոյատևման իրավունքի գլխավոր պայմանի։ Աղգասիրությունը, գրում է նա, «ոչ միայն ազգային գոյության զորավոր ապացույց մ'է, այլ անոր հառաջադիմության անդիմադրելի մղիչ մը»։ Իսկ սահմանադրությունը հայության համար բնական է և նրա ոգին նույնքան հին է, որքան ինքն ազգը. «Սահմանադրությունը ձև, կերպարանք և կենդանություն տվավ այն իրավանց և սկզբանց, որոնց ազգը թեև տեղյակ էր, կաղն ի կաղ կհետևեր», մեկտեղեց այն կանոնները, որոնք պետք է օգնեն իրագործելու ազգային նպատակները։ Այսուհետև նա կնպաստի «ազգային տառապանքների» թեթևացմանը, նաև վերջ կտա ինքնիշխան տնօրինություններին և նրա սկզբունքով ընտրված մարմինները հասարակության առջև հաշվետու պետք է լինեն. «Ահա այս է սահմանադրության ոգեկական իմաստը»։

Մամուրյանի նպատակը սոսկ սահմանադրության անհրաժեշտության և ժողովրդին նրա հարազատ լինելու հիմնավորումը չէ։ Այդ գաղափարը պրոպագանդելու համար նա կարիք չուներ ծածկանունով հանդես գալու։ Մի կողմից սլատրիարքարանի դիվանապետի պաշտոնում գտնվելը, մյուս կողմից ժողովրդին իր անելիքները հուշելու անհրաժեշտությունը ստիպում էին նրան խուսափել սեփական ստորագրությամբ հանդես գալուց։ Եվ դա ակնառու է դառնում նրա հոդվածաշարքի «Միություն սահմանադրականի» 1862 թ. հունվարին և մարտին հրատարակած հատվածներից։ Գտնելով, որ սահմանադրությունն իբրև ժողովրդի հավանությանն արժանացած օրենք «հարատև գործադրելի է», Մամուրյանը չի անգիտանում, որ սահմանադրությունն ունի վտանգավոր հակառակորդներ, որ նրա դեմ գործում են «խաչակիր և նշանակիր դավաճաններ և ապստամբներ»։ Սակայն կա նրանց հակադիր մի ուժ, որի դեմ անզոր են բոլոր հակառակորդները։ Դա է «ազգին անդոդվելի կամքը, անսասանելի իրա-

---

8 «Միություն սահմանադրական». 1861, № 1. էջ 4։

9 Նույն տեղում, № 6, էջ 43։

վունքը», որը «պիտի արթննա ժամանակին։ Առյուծի պես պիտի գոռա ու ճըշ-մարիտ և գորովալիր մոր պես իր հարազատը, իր ծնունդը, իր սիրական սահ-մանադրությունը անփոփոխ և ոտքերի պիտի պահանջե...»[10]։ Ժողովրդի զո-րության նկատմամբ այս հավատով ու նրա տրամադրությանը լավատեղյակ լինելով, հեղինակը սխալ է համարում այն պնդումը, թե հարկ է սահմանա-դրական «իրավունքը կես բերնով» պահանջել, այլ խոսքով՝ վիզ թեքել կառա-վարության առջև։ Նա գտնում է, որ գերադասելի է «առաքինի, արի, գեղեցիկ, պայծառ» ուղի բռնել և ինչ անվեհերությամբ հռչակվեց սահմանադրությունը, նույն «անվեհեր ոգվով պիտի պաշտպանենք անոր գոյությունը»։ Բացելով փակագծերը, Մամուրյանը տեղեկացնում է, որ «անարատ և անմեղ կույս» սահմանադրությունը զրպարտվել է և «թշվառ կույսը բանտ դրվեցավ և հիմա մարմնազնին կորովի անձանց քննության ներքև է»։ Բայց դա չի խանգարի նրա երևան գալուն, եթե, իհարկե, «քննիչք վանականաց հետ խոսքը մեկ ըրած չեն»։ Ուրույն այս ահազանգից հետո նա վստահություն է հայտնում, որ «ազ-գային օրինավոր կամքով» լիովին հնարավոր է «անհաս և անթլպատ պահել, պաշտպանել» սահմանադրությունը։

Իր միտքը և գաղափարները բացահայտ արտահայտելու ազատություն չունենալով, Մամուրյանն, այդուհանդերձ, ակնարկում է ֆրանսիական հեղա-փոխությունները և շեշտում հասարակական շարժման օրինաչափությունը, վկայակոչում է Ռ. Բեկոնին ու Ժ. Մինեյին, որպեսզի հասկացնի, որ ժողովուր-դը լի է իր կամքը գործադրելու անկասելի վճռականությամբ։ Այլաբանության դիմելով՝ նա նկատում է. «Ծովուն տխուր հանդարտությունը ալեկոծության նշան է»[11]։ Իր իրավունքների ու շահերի գիտակցումով «գառնամիտ ժողովուր-դը» «հանկարծ կտեսնես... նոր կենդանություն մի առեր է... հոն և հոս կտա-բուքերի, կերերա, կշարժի, նոր հույս, նոր երջանկագույն ապագա մը որոնե։ կսկսի»,— այս թափանցիկ ակնարկներին Մամուրյանը նաև խստորոշ զգու-շացումով ավելացնում է. «Խոսելու և շարժելու ժամը մոտալուտ է, և եթե եր-բեք սահմանադրական սրբանվեր իրավանց դեմ դավ կամ նենդ նշմարվի, պի-տի տեսնես, որ մեր խոսքը զորավոր և մեր շարժումը ազդու և հրամայական պիտի լինին»[12]։ Հոդվածաշարքի մեջ անհայտ մնացող հատվածում Մամուր-յանը, հավանաբար, խոսում է այն մասին, թե կոնկրետ ինչ է հարկավոր անել լանտված Ազգային սահմանադրությունը վերանվաճելու համար։ Անկախ դրա-նից նա, ինչպես ակնառու է, արդեն ուրույն ձևով հուշել է, որ հարկ է վճռական միջոցների դիմել և փրկել «կորովի անձանց քննության» տակ գտնվող սահ-մանադրությունը։

Վեց-յոթ ամիս անց՝ 1862 թ. սեպտեմբերին «Միություն սահմանադրա-կանը» դադարեց լույս տեսնել։ Մինչ այդ, 1861 թ. հուլիսի 1-ից, արդեն ասպարեզում իշխում էր «Ծաղիկ» դեմոկրատական հանդեսը՝ Գր. Չիլինկիրյանի և Ա. Հայկունու խմբագրությամբ։ Մի տարի հետո ստանձնելով հանդեսի Ղ. Պոլսի գործակալի պարտականությունները, Մ. Մամուրյանը շուտով սկսեց հանդես գալ նրա էջերում՝ դարձյալ ծածկանուններով։ Առաջին իր հրապարա-կումները նա նորից նվիրում է սահմանադրությանը՝ նույն ստորագրությամբ՝ Աշոտ։ Այս անգամ նա շարունակում է արծարծել իր այն գաղափարները, ո-րոնք արտահայտել էր «Միություն սահմանադրականում»՝ կարծես թե ուղղա-կի շարունակելով իր ընդհատված խոսքը։

Աշոտ-Մամուրյանի «Ծաղիկում» տպագրված անդրանիկ ելույթի առանց-քը Կ. Պոլսի հայությանը այրող հարցն է՝ «Սահմանադրութենե ի՞նչ լուր ունիս»։

---

10 Նույն տեղում. 1862, № 9, էջ 67—68։

11 Նույն տեղում, էջ 68։

12 Նույն տեղում. 1862, № 13, էջ 98, 99։

Պատասխանը կտրուկ է. սահմանադրությունը չի հաստատվի, քանի դեռ «ափ ի բերան և դանդաղ նստեր ենք, փոխանակ գործելու»[13]։ 1862 թ. հուլիսի 18-ին Կ. Պոլսից Մամուրյանի գրած նամակը «Ծաղիկում» լույս է տեսել օգոստոսի 1-ին՝ հենց այն օրը, երբ Կ. Պոլսի աշխատավորական զանգվածները դեմոկրատական երիտասարդության գլխավորությամբ հանդես բերեցին իրենց անանխաղեպ վճռականությունը՝ ի պաշտպանություն սահմանադրության, ընդդեմ նրա հակառակորդների և ազգային պատրիարքարանի, որ երկչոտություն էր դրսևորում սուլթանական կառավարության առջև, վճռաբար չէր պայքարում սահմանադրության շուտափույթ վավերացման համար։ Ժողովրդական խավերի այն վճռականությունը, որ պետք է դրսևորվեր երկու շաբաթ հետո, Մամուրյանը կռահում էր ամենայն ճշգրտությամբ և այդ մասին գրում բացահայտ ձեվով։ Քննելով սահմանադրության «երկրորդ գալստյան» երկարատև ձգձգման պատճառները, Մամուրյանը վարպետ գրչով ներկայացնում է հասարակական տրամադրության «մանրանկար պատկերը»։ Ահա ինչպես է նկարագրում Մամուրյանը գեղիշխող տրամադրությունը. «Ծեծ ուտել և լռել ատեն մը հայուն Ճակատագիրն էր. սահմանադրություն մը հաստատել և ջնջել հիմարություն [է], բայց դայն վերանորոգել և անոր վավերացման հավիտյան սպասել նույնիսկ վատություն է, բառին ընդհանուր առմամբ։ Մինչև ե՞րբ սպասել և մեր իրավանց վրա աչք գոցել պետք է։ Ազգին տունը կփլի, անոր շունչը կկտրի, շազգային վարչություն մը մեր գլխին վերևը կխրոխտա, մոտավոր, մանավանդ հեռավոր հայը անիշխանության մեջ կլլկին, կփարատին, լեռ լեռ կթափառին, արյուն կուլան և բավական չէ, և մենք դեռ սպասե՞նք։ Բավական չե՞ն մեր քաջած տառապանքը, բավական չեղա՞ն մեր ըրած զիջումները, բավական չեղա՞ն ազգային անարատ սահմանադրության կրած օտարոտի և պիղծ այլայլություններ, և դեռ կուզեն որ վատաբար համբերենք։ Չէ՛, չէ՛, ա՛լ մեր համբերությունը հատավ, հատա՛վ մեր հոգին, հատա՛ն մեր ոսկերքը։ Համբերությունը և հլությունը չունին վարձք այս աշխարհիս վրա. հանդգնությամբ և անվհերությամբ պարտինք կորզել դանդաղության, շարակամության մեզ զլացածը։ Մինչև որ չի բողոքենք, մինչև որ չստիպենք և ի հարկին մեր բազուկը... մի միայն մեր թշնամիներն են որ...»[14]։

Փորր-ինչ ազատությունից հետո Մամուրյանի գրիչը կրկին կաշկանդվում է ու նա դիմում է բազմակետի «լեզվին», բայց այդ նույն օրն էլ՝ օգոստոսի 1-ին, Կ. Պոլսում ժողովուրդն արդեն խոսում էր իր բացարձակ լեզվով. նա, ինչպես գրում է Աշոտ-Մամուրյանը «Ծաղիկի» հաջորդ՝ օգոստոսի 10-ի հեռամարում, «բռնապես խառն ժողովը լուծեց և պատրիարքարանը փակեց, եղելություն մը, որուն հայտնի հանդիմանական նպատակը սահմանադրության հարություն տալ է»[15]։ Մամուրյանը մանրամասնորեն պատմում է օգոստոսի 1-ին տեղի ունեցածը՝ համարելով այն «ազգային հեղափոխական վիճակին երրորդ շրջանը»՝ 1860 թ. մայիսի 24-ից և 1861 թ. օգոստոսի 21-ից հետո։ Ինքը հեղինակն էլ, ծանրապես խորհրդածելով կատարվածի շուրջը, գտնում է, որ ժողովուրդը սահմանադրության համար բողոքելու իրավունք ունի «չէ թե հազար, այլ տաս հազար հոգվով», որ նա միշտ էլ բողոքելու իրավունք ունի։ Սակայն նա կողմնակից չէ «ծայրահեղ միջոցների» դիմելուն և արձանագրում է, որ

---

13 «Ծաղիկ». 1862, № 40, էջ 330։

14 Նույն տեղում։ Այս հատվածը՝ աղբյուրի ոչ ճիշտ նշումով, վրիպակներով ու անհարկի հապավումներով Հ. Ղազարյանը վերագրել է Գ. Զիլինկիրյանին (տե՛ս Հ. Ղ ա զ ա ր յ ա ն. Գրիգոր Զիլինկիրյան. Երևան, 1959, էջ 82—83)։

15 «Ծաղիկ». 1862, № 41, էջ 337։

«օգոստոսի մեկին դեպքը անախորժ տպավորություն մը ունեցավ ազգին մեծագույն մասին վրա»։ Ակնառու է, որ ընդհանուր երկյուղը, որ ծագել էր սահմանադրությունը կորցնելու վտանգից, բաժանում է նաև Մամուրյանը. նա գտնում է, որ այնուհետև ազգը «շատ պիտի հոգնի, քրտնի և երանի՜ թե միայն քրտինք թափելով հասներ իր փափաքին...»[16]։

Օգոստոսի 1-ին Կ. Պոլսում տեղի ունեցած ժողովրդական ցույցին Մ. Մամուրյանն ընդարձակորեն է անդրադառնում և իր կարծիքն ավելի որոշակի արտահայտում «Կիլիկիա» հանդեսում 1862 թ. սեպտեմբերին տպագրած հոդվածում՝ դարձյալ Աշոտ ծածկանունով։ Նրա այդ հոդվածը արտատպեցին «Ծաղիկ» և «Գարուն Հայաստանի» հանդեսները[17]։ Այս անգամ Աշոտ-Մամուրյանը բացառում է Բ. Դռան իրավասությունը փոփոխել ազգային կանոնադրությունը՝ սահմանադրությունը, քանի որ այն հենված է ազգային կրոնի, ազգության էության ու բարքերի վրա։ Կառավարությունը, նրա կարծիքով, միջամտեց այն բանից հետո, երբ սահմանադրության հակառակորդները սկսեցին «խլրտել և մեքենայել» և առիթ տվեցին Բ. Դռանը, որպեսզի խափանի սահմանադրության գործադրությունը։ Դրա հետևանքով էլ «երկու անհավասար բանակներ ճակատ առ ճակատ կեցան և տեսակ մը քաղաքական պատերազմ սկսավ գրիչ շառժելով... նյութական ույժը միայն կարող էր դայն վճռել... Գործը այն աստիճանի հասած էր, որ ազգին մեկ մասը մյուսին հետ չէ թե գրչով, խորհրդով պիտի խոսեր, այլ զենքով, և հաղթող կողմը մյուսը յուր պայմաններուն պիտի ենթարկեր»[18]։

Աշոտ-Մամուրյանի բանաձևը՝ «դինական հեղափոխություն մը պէտք էր», բացահայտում է խնդրի հանգուցալուծման միակ ելքը, որին, սակայն ազգը դիմել չէր կարող, քանի որ «ազգը Օսմանյան տերության հպատակ և օսմանյան հողին մեջն էր»։ Այդ պատճառով խնդիրը հանգեց կառավարության միջամտությանը՝ նրան, ինչին ձգտում էին սահմանադրության հակառակորդները և մատնիչները, որ ազգային պարզ կանոնադրությունը «իբրև ոճրագործություն մը, ապստամբական գործ մը» համարեցին ու հռչակեցին։ Նրա կարծիքով ժողովրդի կտրուկ և զանգվածային քայլերը, «օգոստոսին մեկին դէպքին ներքին պարագաները» ցույց են տալիս, «թե բողոքարկու ամբոխը բռածը դրածը չգիտե...»։ Ստեղծված իրադրությունը, մանավանդ ազգի անմիաբան լինելը ստիպում են նրան հանգելու այսպիսի հետևության. «Ուստի կմնա. որ ազգը իր բնական շրջանին մեջ մտնե, իր օգուտը, իր իրավունքը, իր ապագա բարօրությունը ճանչնալով, հոգվով սրտով միաբանի, որպեսզի ազգային սահմանադրությունն ալ իր տեղը գա»[19]։ Այլ խոսքով նա, «տաք և թեթև գլուխներին» հակադրվելով, նկատում է, որ «խոտորնակ և աննպատակ ընթացքը» իր տա ցանկալի արդյունքը, «անիշխանական միտումները» հեռու չեն տանի։ «Ազգին այս թշվառ և ցավալի վիճակին միակ և ապահով դարման մը կա. այս դարմանն է՝ հաշտություն և միաբանություն,— գրում է Աշոտ-Մամուրյանը և ցույց տալիս այն օրինակը, որին պետք է հետևել։ «Հույները ընդհանրապես իրենց մեջ միշտ կռիվ ունին. սակայն երբ արտաքին թշնամին տեսնեն, զիրար կգրկեն, կմիանան, ու ոսոխը խորտակելեն ետև՝ զենքը վար կդնեն ու նորեն կսկսին իրենց վիճաբանությունը... պետք է իրարու անդադար ըսենք Աթենա-

---

16 Նույն տեղում. 1862, № 42, էջ 347։

17 «Կիլիկիա». 1862, № 9, էջ 97—103։ «Ծաղիկ». 1862, № 44, էջ 361—365։ «Գարուն Հայաստանի». 1862, № 14, էջ 105—109։

18 «Ծաղիկ». 1862, № 44, էջ 362—363։

19 Նույն տեղում, էջ 363, 364։

սիին սա խոսքը՝ «զա՜րկ, եղբայր, բայց մտիկ ըրե՜», և այս պայմանավ միայն կրնանք աղատիլ այն սոսկալի կործանմանե, ուր մեծաքայլ կդիմե Ազգը...»[20]։

Աշոտ-Մամուրյանի՝ սահմանադրությանը նվիրված մտորումներում ակնառու է նաև մի որոշակի միտում. սահմանադրական ոգին հիմնավորել ազգի անցյալի պատմությամբ, ազգային կրոնի սկզբունքներով ու ավանդներով։ Նա ուղղակի գտնում է, որ սահմանադրությունն անկասելի է, որ ժողովուրդը չի հանդուրժի նրա խափանումը։ Ծածկանունով հրատարակված իր վերջին՝ «Սահմանադրություն» հոդվածում, որ «Ծաղիկից» արտատպեցին «Գարուն Հայաստանի» հանդեսը և «Մեղուն»[21], Մամուրյանը բուռն բանավեճ է մղում «Մասիսի» նամակագրի դեմ, որը «ազգային հեղափոխության» ներքին պատճառները որոնելով. սահմանադրության կործանման պատճառը համարում է «լրագրաց անկանոն ազատությունը»։ Այդ առթիվ էլ նա հարկ է համարում ընդգծել, որ «պատմության գործն է բացե ի բաց և անաչառ ոգվով հետազոտել և մանր կշռել սահմանադրության ծագման, կարճատև գործադրության և մանավանդ անոր անկման նախորդ և հարակից պարագաները»[22]։

Պատահաբար չէր Մամուրյանը հատուկ հոդված նվիրում «Մասիսում» (№ 546) հրատարակված նամակին։ Նրա հեղինակը ուրույն ձևով մեկտեղել էր հակասահմանադրական այն միտումները, որոնք դրսևորվել էին նաև «Երեփակ», «Արևելյան դար», «Արշալույս արարատյան» և այլ պարբերականներում։ Մերժելով նրանց «թյուր, ագոտ և միականի կերպով» հայտնած կարծիքը, թե սահմանադրության խափանման պատճառը մամուլի, ավելի ճշգրիտ՝ դեմոկրատական պարբերականների չափից ավելի աղատ գործունեությունն է, այսինքն ծավալված քննադատությունը, Մամուրյանը պաշտպանում էր թե՛ մա-

---

20 Նույն տեղում, էջ 365։ Ժողովրդին միանալու և աղղու միջոցների դիմելու կոչ անելով, Մամուրյանը միաժամանակ ցավով նկատում էր, որ նա դեռևս պատրաստ չէ և սուլթանական պայմանները չեն հերում ավելի վճռական քայլերի դիմելու, որ երբեմն ցուցաբերվում է նույնիսկ անտեղի նոկշոտություն։ Իր հոդվածին նա կցել է այդ վկայող մի ծանոթագրություն։ Սելիմ փաշայի հետ մայր եկեղեցում, օգոստոսի 1-ի եղելությունների առթիվ բանակցելիս, լեփ-լեցուն տաճարում հանկարծակի խուճապ է առաջանում, «փախչող փախչողի կըլլան լեղապատար, կարծելով թե փաշային ձեռքի շարժումը զինվորական մեկուն՝ եկեղեցին դորոք պաշարելու հրաման մ՝է»։ Սելիմ փաշայի «ձեռքի շարժումը ամբողջ բազմություն մը կդղրդե և ցիր ու ցան կրնե»,— դառնորեն նկատում է Մամուրյանը, ապա ցավագին ավելացնում. «Ո՜ հայրս, եթե աստծու տաճարին մեջ այսքան քաջ ենք, հապա ի՞նչ դյուցազուններ պիտի կտրենք պատերազմի դաշտի վրա...» (Նույն տեղում, № 42, էջ 346)։

21 Նույն տեղում, № 45, էջ 369։ «Գարուն Հայաստանի». 1862, № 16, էջ 121—124։ «Մեղու». 1862, № 173, էջ 201—204։

22 «Ծաղիկ». 1862, № 45, էջ 369—370։ Մ. Մամուրյանի առաջադրած այդ խնդիրը՝ Ազգային սահմանադրության պատմության ուսումնասիրության առումով, այսօր էլ արժանի է հատուկ ուշադրության։ Անցած ավելի քան 120 տարիների ընթացքում, իհարկե, անհրաժեշտ մի շարք քայլեր են արվել. պատմաբան Ալ. Երիցյանը «Փորձում» (1877, № 1—4) հրատարակել է «Տաճկաստանի հայոց իրավունքը և նոցա սահմանադրությունը» պատմական արժեքավոր տեսությունը, Ա. Ալպոյաճյանը լույս է ընծայել «Ազգային սահմանադրություն, իր ծագումը և կիրառությունը» հանգամանալի ուսումնասիրությունը (Ընդարձակ օրացույց ս. Փրկչյան հիվանդանոցի. Կ. Պոլիս, 1910, էջ 76—528), Սարուխանը (Առաքել Սարուխանյան) տպագրել է «Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860—1910)» (հ. 1, Թիֆլիս, 1912) ծավալուն աշխատությունը։ Սովետահայ պատմագիտությունը իր հերթին պատշաճ տեղ է հատկացրել հարցի նորովի ուսումնասիրությանն ու լուսաբանմանը (Հայ ժողովրդի պատմություն. հ. 5։ Հայկական սովետական հանրագիտարան. հ. 1 և այլն)։ Անկախ այդ ամենից, արևմտահայ Ազգային սահմանադրությունը դեռևս կարոտ է մարքսիստական-լենինյան լայն ուսումնասիրության։ Հարկ է գիտական միասնական կարծիք մշակել այդ կարևոր խնդրում։

մուլի ազատության իրավունքը և թե՛ Ազգային սահմանադրությունը՝ նոանդ միացյալ հակառակորդներից։ Միաժամանակ նա բացահայտում է սահմանադրության խոփանման որոշ պատճառները և հակադարձված տալիս արևմտահայ հետադիմությանը, աղգի այն «փոքր և տիրական մասին», որ գրոհելու առիթ որոնելով շարունակ որոգայթներ էր լարում ազգային օրենսդրության դեմ, ծավալում էր «ազգասպան» գործունեություն։ «Մեր գիտցածը սա է,— գրում է Աշոտ-Մամուրյանը,— որ սահմանադրությունը ինքնին հին դրության խոսուն դատապարտությունն է, ազատ հրապարակության աջակից է»։ Հարցի քննվող դիտակետից արվող այդ կարևոր հետևությունից հետո Մամուրյանն իր հոդվածն ավարտում է այս մեջբերումով. «Վասնզի մենք տեղ-տեղ կհարգենք և շատ տեղ (գթասրտութենե) կխնայենք անցյալը, այն պայմանավ, որ բարեհաճի մեռնելու։ Եթե կենդանանալ, գլուխ տնկել ուզե, իսկույն զանի մեռցունելու չափ հետը կմաքառինք»[23]։

Այսպիսով, Աշոտ ծածկանունով հանդես գալով, Մ. Մամուրյանը սկզբունքային դիրքերից ու հրապարակախոսական ակտիվությամբ արծարծել է սահմանադրական պայքարի հանդուցային հարցերը, լուսաբանել այդ պայքարի առավել թեժ էջերը, պաշտպանել առաջադիմական-դեմոկրատական մամուլի իրավունքները, մերկացրել սահմանադրության հակառակորդներին։ Սահմանադրության դադարեցման ժամանակամիջոցին Մամուրյանի հրատարակած այդ հոդվածները կարևոր վավերագրեր են արևմտահայերի ազգային-սահմանադրական պայքարը ճիշտ ըմբռնելու և ապագա ականավոր հրապարակախոս խմբագրի գործունեության սկզբնաշրջանը ներկայացնելու համար։

НЕИЗВЕСТНЫЙ ПСЕВДОНИМ МАГТЕОСА МАМУРЯНА

М. Н. АКОПЯН

Резюме

Изучение журналов «Миутюн сахманадракан» («Конституционный союз») и «Цахик» («Цветок») показывает, что будущий известный публицист-редактор Маттеос Мамурян в этих журналах выступал также под псевдонимом Ашот. Его статьи, опубликованные в 1861—1862 гг., в основном посвящены конституционной борьбе западных армян. В статье прослеживается развитие демократических идей молодого публициста.

---

23 «Ծաղիկ». 1862, № 45, էջ 370, 371, 372։